2021 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Գյուղատնտեսություն ու բնապահպանություն

2021թ կատարված ցանքերը և ստացված բերքը

Կատարվել է՝

1.Հացահատիկի և հատիկաընեղենի 1569 հա ցանք, ստացվել է 1554 տ. բերք.

2. Բանջարա-բոստանային մշակաբույսեր 322 հա ցանք, ստացվել է 3790տ բերք,

3 Կարտոֆիլ՝ 107հա. ստացվել է 1204 տ բերք,

4.Մշակվել է պտղի և հատապտղի 2138 հա այգի, ստացվել է 7139 տ բերք,

5. 1847 հա տարածքից ստացվել է 22.971 տ խոտ,

6. Խաղողի 1200 հա այգուց ստացվել է 4033 տ խաղողի բերք,

Արտադրված 4033.2 տոննա խաղողից մթերվել է 3579.5 տոննա, որից 1896 տոննան՝ մարզի վերամշակողների կողմից:

Բույսերի պաշտպանության ծրագրով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից անվճար տրամադրված 54.4լ բրամադիալոն թունանյութի միջոցով մարզի 9 բնակավայրերում 680 հա վարակված վարելահողերի և բազմամյա տնկարկների վրա իրականացվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ:

Բնակչության և գյուղացիական տնտեսությունների կողմից մշակվող տարածքների ոռոգման նպատակով <<Եղեգնաձոր>> ՋՕ-ի կողմից կատարվել է 11. 453 000մ^3 ջրտուք:

Հաշվետու ժամանակահատվածում համաձայն պլան գրաֆիկի մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից իրականացվել են պետպատվերով նախատեսված անասնաբուժական կանխարգելիչ և ախտորոշիչ բոլոր միջոցառումները բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, դաբաղ, սիբիրախտ, մաշկաբորբ և էմկար հիվանդությունների գծով:

Արձանագրվել է վայրի գիշատիչ կենդանիների, մասնավորապես գորշ արջի կողմից Ջառիթափ, Եղեգիս, Արենի, Գլաձոր համայնքների 112 գյուղացիական տնտեսությունների հասցված վնասը, որը կազմել է 10.5 մլն դրամ:

Վնասի փոխհատուցման նպատակով աշխատանքներ են տարվել մարզում գործունեություն իրականացնող բնապահպանական կազմակերպությունների հետ:

Երաշտի հետևանքով չի հնձվել 727 հա հացահատիկային մշակաբույսերի (գարի, ցորեն, հարճար) ցանքատարածություններ, վնասի չափը կազմել է 152. 7 մլն դրամ:

2021թ.1-ին կիսամյակի ընթացքում կարկտահարության հետևանքով վնասվել են 225 հա պտղատու և խաղողի այգիներ: Վնասի չափը կազմել է շուրջ 326 մլն դրամ: Իսկ 2-րդ կիսամյակում, դարձյալ կարկտահարությունից, վնասվել են 24.7հա պտղատու այգի, բանջար-բոստանային և հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածություններ:

Վնասը կազմել է 16.3մլն. դրամ:

Կարկատահարության վնասները մեղմելու համար ՀՀ կառավարությունը մարզին հատկացրել է 60.8մլն դրամ գումար՝ 32 նոր հակակարկտային կայաններ տեղադրելու համար: Բոլոր 32 կայաններն արդեն տեղադրվել են:

2021 թ. ՀՀ կառավարությունը 24.2 մլն. դրամ է հատկացրել Գետափ-Եղեգնաձոր-Գլաձոր-Վերնաշեն ոռոգման ջրագծի վթարային 29 հենասյունեի վերանորոգման համար: Շինարարկան աշխատանքներն ընթացքի մեջ են, կավարտվեն 2022 թվականին:

Մարզում գործող բանկերի կողմից մարզի գյուղացիական տնտեսություններին (545 շահառու) տրամադրած գումարի չափը կազմել է շուրջ 940 մլն դրամ:

Բնապահպանություն

1. Հանրային լսումներ են անցկացվել Արենի համայնքի Խաչիկ և Գնիկշիկ բնակավայրերում քվարցիտային հանքավայրերի շահագործման, ինչպես նաև Գնիշիկ բնակավայրի քվարցիտների հանքավայր <Ջրաձոր> տեղամասի հանքարդյունահաման աշխատանքների վերաբերյալ:

Խաչիկ բնակավայրում <<Յուլի Դալի>> ՍՊԸ-ին տրվել է թույլատվություն կատարելու նախնական ուսումնասիրություն:

2. Միջգերատեսչական հանձնաժողովի համատեղ աշխատանքում՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունում քննարկվել է մարզի Եղեգիս գետի վրա կառուցված 11(տասնմեկ) ՀԷԿ-երի գործունեության ուսումնասիրությունը՝ որպես <ՇՄԱԳ>:

<ՇՄԱԳ>-ի քննարկում է անցկացվել նաև<<Վայք Գոլդ>> ՍՊԸ-ի կողմից Ազատեկի ոսկու բազմամետաղային հանքավայրի ստորգետնյա եղանակով արդյունահանման աշխատանքների վերաբերյալ :

3. Ուսումնասիրվել է Եղեգիս համայնքի Հորս բնակավայրում կառուցվող ՓՀԷԿ-ի գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ըստ նախնական եզրակացության՝ ՓՀԵԿ-ի գործարկումը խիստ բացասաբար կազդի շրջակա միջավայրի վրա:

Քաղաքաշինություն

Հաշվետու ժամանակահատվածում վերահսկողություն է իրականացվել մարզում 2021 թվականին կատարվող թվով 32 և 2020 թվականին սկսված ու 2021 թվականին շարունակվող 6 սուբվենցիոն ծրագրերի նկատմամբ: 2021թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ավարտվել է 28 ծրագիր, ընթացքի մեջ է 10-ը: 6 ծրագրի վերաբերյալ մրցույթ չի հայտարարվել:

<**Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի**> **պատվիրատվությամբ կ**առուցվում է Եղեգնաձոր համայնքի Արևմտյան թաղամասի կոյուղագիծը: Պայմանագրային գումարը կազմում է 73.0 մլն. Դրամ: Աշխատանքներն ընթացքի մեջ են, ավարտը 2022թ.:

Ջերմուկի քաղաքային զբոսայգու բարեկարգման, հեծանվաուղու և սանհանգույցների կառուցում՝ 215.4 մլն. Դրամ: Աշխատանքներն ավարտված են:

Ասիական բանկի կողմից տրամադրված վարկային միջոցներով կառուցվում է Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի նոր շենքը: Պայմանագրային գումարը կազմում է 1. 228 մլրդ. դրամ: Աշխատանքները շարունակվում են: Ավարտը 2022թ.:

ՀՀ Առողջապահության նախարարության պատվիրատվությամբ համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր քաղաքում կառուցվում է հիվանդանոցի նոր շենք՝ 1.997.0 մլն. դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքներն ընթացքի մեջ են: Ավարտը՝ 2023 թ.:

<Վեոլիա Ջուր> ՓԲԸ-ի միջոցներով կատարվում է

- Եղեգնաձոր համայնքի Լևոնյան փողոցի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ: Նախահաշվային արժեքը կազմում է 27,96 մլն.դրամ:
- Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում ջրամատակարարման բախշիչ ցանցերի վերանորոգում: Նախահաշվային արժեքը կազմում է 22,2 մլն.դրամ: Կատարվել է 9,2 մլն. դրամի շինարարական աշխատանքներ: Ավարտը 2022 թվական:

ՀՀ կառավարության 13.05.2021թ. թիվ 786-Ն որոշմամբ մարզին հատկացված դրամաշնորհային գումարից մարզպետի 15.06.2021թ. թիվ 75-Ա որոշմամբ 32.0 մլն.դրամ տրամադրվել է մարզի Ազատեկ, Աղավնաձոր, Աղնջաձոր, Արփի, Գետափ, Զառիթափ, Խաչիկ, Մարտիրոս գյուղական բնակավայրերի դպրոցների և Ջերմուկ քաղաքի թիվ 1 դպրոցի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների մասնակի կարգավորման համար: 2021 թվականին իրականացվել են նախատեսված բոլոր ծրագրերը բացառությամբ՝ Աղավնաձորի դպրոցի գազի միացման և ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքները՝ 2.0 մլն.դրամի չափով (Մրցույթը չի կայացել):

Գլաձոր համայնքի ոռոգման ջրագծի ճնշումային խողովակի վերանորոգման համար հատկացվել է 22,68 մլն.դրամ (կապիտալ սուբվենցիա): 2021թ. կատարվել է 9,86 մլն. դրամի շինարարական աշխատանքներ: Ավարտը՝ 2022 թվական:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինական կոմիտեի ԾԻԳ-ի կողմից մարզի բնակավայրերում իրականացվում է մոդուլային 3 նոր դպրոցների կառուցման աշխատանքները: Նախահաշվային արժեքները կազմում են՝ Եղեգիսում՝ 706,0 մլն.դրամ, Չիվայում՝ 713,1 մլն.դրամ և Գոմքում՝ 652,7 մլն.դրամ:

Համայնքային բյուջեների միջոցներով կատարվել է 254.33 մլն.դրամի աշխատանքներ:

Սուբվենցիոն ծրագրերով իրականացվում է 32 ծրագիր՝ որոնց ընդհանուր գումարը կազմել է ընդամենը 1 մլրդ 625 մլն 46հազար. դրամ:

2021թ. Վայոց ձորի մարզում իրականացվել են ընդամենը 2 մլրդ 741 մլն 34 հազ դրամի չափով կառուցման, վերանորոգման և հիմնանորոգման շինաշխատանքներ:

Ճարտարապետության ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել և լիազոր մարմին է ուղարկվել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում նախագծման թույլտվություն պահանջող, համայնքի ղեկավարների կողմից ներկայացված, 6 քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթ: Ուսումնասիրման փուլում մերժվել և լրամշակման է ուղղարկվել 2 փաթեթ: Կատարվել են բնակավայրերում հողի նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ՝ համայնքի ղեկավարների առաջարկների հիման վրա:

Ավարտվել և համայնքներին է տրամադրվել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի պատվերով մշակված միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի լրամշակված տարբերակները:

Ի կատարումն ՀՀ կառավարության 2006թ. թիվ 346-ն որոշման՝ մասնակցություն է ապահովվել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեում կազմակերպված առկա պետական գույքի գրանցման և կոմիտեին հանձնելու վերաբերյալ քննարկումներին, և կատարվել են համապատասխան հանձնարարականները:

Համայնքներից ստացված 143 շինթույլտվության վերաբերյալ ամսական կտրվածքով հաշվետվություն է ներկայացվել ՀՀ ՏԿԵՆ :

Ջրամատակարարման, ջրհեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

<Վեոլիա Ջուր> ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր: Ընկերության բաժանորդների թիվը 9364 է: 2020թ-ի համեմատ բաժանորդների թիվը 2021թ-ին ավելացել է 129 բաժանորդով:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից: Համայնքների ղեկավարներին առաջարկվել է՝ ձեռնարկել համապատասխան միջոցառումներ ջրամատակարարման համակարգերում արձանագրված թերությունները շտկելու ուղղությամբ: 2021թ-ի ընթացքում մարզի տարածքում խմելու ջրի հետ կապված բռնկումներ չեն արձանագրվել:

Մարզի 44 բնակավայրերից 17-ը գազաֆիկացված է: Առաջնահերթությունը մնում է չգազաֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը:

Ազգաբնակչության հետ աշխատանքներ են տարվում նաև այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու համար:

<Գազպրոմ Արմենիա> ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 8904 է: 2021թ. ընթացքում տեղադրվել է 170 անվտանգության ազդանշանային սարք: Հաշվետու տարում բնական գազի շահագործման ընթացքում արտակարգ դեպքեր չեն արձանագրվել:

Ֆինանսական հատկացումներ

ՀՀ 2021թ. պետական բյուջեի մասին,, ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետարանին 29 ծրագրերով 2021թ.-ի համար նախատեսվել են ծախսեր 3 մլրդ 784 մլն 592 հազար 7 հարյուր ՀՀ դրամ գումար: Փաստացի ծախսը կազմել է 3 մլրդ 521 մլն 46 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել 93%-ով, որից

Ըստ ծրագրերի նախատեսվել և ֆինանսավորվել է.

Գործադիր իշխանության, **պետական կառավարման հանրապետական և տարածքային**, կառավարման մարմինների պահպանում.

2021թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 427 մլն 381 հազար 6 հարյուր ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 425 մլն 260 հազար 6 հարյուր ՀՀ դրամ:
Ֆինանսավորումը կատարվել է 99.5 %-ով:
Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 52 մլն 500 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 51 մլն 755 հազար 1 հարյուր ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 98.6 %-ով:

Մարզերին սուբվենցիաների տրամադրում .

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 626 մլն 293 հազար 9 հարյուր ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել 547 մլն 788 հազար ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 87.5 %-ով:

Մարզում առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 120մլն ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 120 մլն. դրամ: Ֆինանսավորվել է 100%-ով:

Պատերազմի արդյունքում ժամանակավորապես ՀՀ-ում գտնվող քաղաքացիներին մշտական բնակության վայր տեղափոխում .

Նախատեսվել է 120 հազար դրամ, փաստացի ֆինանսավորվել է 120 հազար դրամ՝ կատարված ուղղերթների քանակին համապատասխան: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

Այլընտրանքային ծառայություն.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 360 հազար դրամ, փաստացի ֆինանսավորվել 360 հազար դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

Մշակույթ

Ըստ մշակույթի ոլորտի ծրագրերի 2021**թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է** 19 **մլն** 963 **հազար** 7 **հարյուր ՀՀ դրամ**: **Ֆինանսավորվել է** 19 **մլն** 963 **հազար** 7 **հարյուր ՀՀ դրամ**:

Այդ թվում՝

Պետական աջակցություն Թանգարաններին.

Նախատեսվել է 16 մլն 999 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 16 մլն 999 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 2 մլն 792 հազար 6 հարյուր ՀՀ դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում.

Նախատեսվել է 2 մլն 964 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2 մլն 964 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 494 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

-Կրթություն

Ըստ կրթության ոլորտի ծրագրերի նախատեսվել է 2 **մլրդ** 331 **մլն** 553 **հազար** 5 **հարյուր դրամ**, **ֆինանսավորվել է** 2 **մլրդ** 154 **մլն** 411 **հազար** 8 **հարյուր ՀՀ դրամ**:

-Հանրակրթական ուսուցման ծրագրեր՝

Տարրական ընդհանուր կրթություն.

2021**թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է** 860 **մլն** 511 **հազար** 5 **հարյուր ՀՀ դրամ**, **ֆինանսավորվել է** 738 **մլն** 372 **հազար** 5 **հարյուր ՀՀ դրամ**, **ֆինանսավորումը կատարվել է** 85.8%-**ով**:

Հիմնական ընդհանուր կրթություն.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 978 մլն 751 հազար 5 հարյուր դրամ, ֆինանսավորվել է 938 մլն 905 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 95.9%-ով:

Միջնակարգ ընդհանուր կրթություն.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 301 մլն 415 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 301 մլն 415 հազար 3 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Տարրական ներառական ուսուցում.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 22 մլն 216 հազար 6 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 17 մլն 671 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 79.5%-ով:

Հիմնական ներառական ուսուցում.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 40 մլն 898 հազար 8 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորվել 40 մլն 392 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.8%-ով:

Միջնակարգ Ներառական ուսուցում .

2021թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 5 մլն 554 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորվել 5 մլն 554 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Նախադպրոցական կրթություն

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 21 մլն 681 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 20 մլն 537 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 94.7%-ով:

-Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության շրջանակներում հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում.

2021թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 26 մլն 230 հազար 4 հարյուր ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 23 մլն 512 հազար 8 հարյուր ՀՀ դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 89.6 %-ով:

Արտադպրոցական դաստիարակություն

2021թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 52 մլն 450 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 52 մլն 450 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցում.

2021թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 9 մլն 263 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 9 մլն 263 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարներ.

2021թ. պետական բյուջեով նախատեսվել է 7 մլն 17 հազար 3 հարյուր ՀՀ դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 4 մլն 28 հազար 3 հարյուր դրամ, ֆինանսավորումը կատարվել է 57.4%-ով:

Տրանսպորտ, **ճանապարհային տնտեսություն**

Մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ նորոգում.

Նախատեսվել է 125 մլն ՀՀ դրամ: Փաստացի ֆինանսավորվել է, 125 մլն ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում.

2021թ. պետական բյուջեով նախատեսվել է 81 մլն 420 հազար ՀՀ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 76 մլն 387 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 93.8%-ով, թերի ֆինանսավորումը պայմանավորված է մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի հայտերի հետ:

Ուսուցիչների վերապատրաստում.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 4 մլն 440 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորվել է 1 մլն 185 հազար 6 հարյուր ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 26.7%-ով:

Կամավոր ատեստավորված ուսուցիչների հավելավճարներ.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 330 հազար դրամ, ֆինանսավորվել է 330 հազար ՀՀ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Ամառային հանգստի կազմակերպում.

2021թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 793 հազար դրամ, ֆինանսավորվել է 793 հազար դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի 8 համայնքների տեղական բյուջներով ընդամենը եկամուտներ են նախատեսվել 3 մլրդ 778 մլն 581 հազար ՀՀ դրամ, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից հավաքագրվել է 3 մլրդ 362 մլն 14 հազար 1 հարյուր ՀՀ դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 89.0%-ով, որից սեփական եկամուտներ՝ նախատեսվել է 1 մլրդ 78 մլն 650 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 1 մլրդ 63 մլն 37 հազար 9 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 98.6%-ով: Համահարթեցման կարգով ՀՀ 2021թ. համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 1 մլրդ 584 մլն 70 հազար 3 հարյուր ՀՀ դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է.

- Անշարժ գույքի հարկ /ներառյալ հողի հարկ/ ՝նախատեսվել է 88 մլն 97 հազար 8 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 87 մլն 971 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 99.9%-ով:
- Գույքահարկ /ներառյալ փոխադրամիջոցներ և շենքեր, շինություններ/՝ 294 մլն 901 հազար 8 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 311 մլն 266 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 105.5%-ով:
- Տեղական տուրքեր՝ 27 մլն 232 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 29 մլն 431 հազար ՀՀ դրամ, կատարվել է 108.1%-ով:
- Գույքի վարձակալություն՝ 402 մլն 450 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 378 մլն 857 հազար 5 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 94.1%-ով:
- Տեղական վճարներ՝ նախատեսվել է 175 մլն 473 հազար 7 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 155 մլն 623 հազար 6 հարյուր ՀՀ դրամ, կատարվել է 88.7 %-ով:
- Աղբահանության վճար՝ նախատեսվել է 73 մլն 333 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 53 մլն 726 հազար 2 հարյուր ՀՀ դրամ կամ կատարվել է 73.2%-ով:
- Այլ եկամուտներ 84 մլն 129 հազար 2 հարյուր ՀՀ դրամ, փաստացի հավաքագրվել է 85 մլն 928 հազար 8 հարյուր ՀՀ դրամ, կամ կատարվել է 102.1%-ով:

Ճանապարհաշինության և տրանսպորտի ոլորտ

2021թ. ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման ծրագրի շրջանակներում կատարվել է 239 կմ ճանապարհների ձմեռային և 167.2 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 278 մլն. դրամ, իսկ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների վրա նույն ծրագրի շրջանակներում 147.8 կմ ձմեռային և 76 կմ ամառային ընթացիկ պահպանության աշխատանքներ՝ 125 մլն. դրամ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները

1. Մ-2 Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 98-րդ կմ-ից 101.4 կմ-ն ընկած 3.4կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում՝ 600 մլն. դրամ: Կատարվել է աշխատանքների 50%-ը: Աշխատանքների ավարտը՝ 2022թ.:

2. Մ-2 Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 108.4-րդ կմ-ից 126.1 կմ-ն ընկած 17.7կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում- 3 մլրդ դրամ : Աշխատանքների ավարտը՝ 2022թ. :

3. Մ-2 Երևան–Երասխ–Գորիս–Մեղրի–Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 150.7 կմ-ից 167.6 կմ-ն ընկած 16.9 կմ երկարությամբ հատվածի հիմնանորոգում - 2 մլրդ 891 մլն դրամ:
Աշխատանքների ավարտը՝ 2022թ. օգոստոս:

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամով իրականացվում են հետևյալ աշխատանքները

1.Ջերմուկ բնակավայրի Ձախափնյակ թաղամասի Մաշտոցի և Ազատամարտիկների փողոցների վերանորոգում և բարեկարգում–679 մլն200 հազար դրամ
Աշխատանքների ավարտը՝ 2022թ. հոկտեմբեր:

2. Ջերմուկ բնակավայրի Շահումյան, Վարդանյան, Մյասնիկյան, Ադամյան և Չարենցի փողոցների վերանորոգում, և վերականգնում և <Քարայծ տանող ճեմուղու կառուցում> - 794.3 մլն. Դրամ: Աշխատանքների ավարտը՝ 2022թ. օգոստոս:

Տարբեր ծրագրերով նախատեսված և կատարված աշխատանքներ

Ընդամենը՝ 8 **մլրդ** 373 **մլն** 500 **հազար դրամ**:

Մարզի տարածքում միջհամայնքային ուղևորափոխադրումներն իրականացվում են ընդհանուր օգտագործման ավտոմաբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների միջոցով:

2021թ. ընթացքում կազմվել և ներկայացվել է 2022–2024թթ. մարզային և համայնքային նշանակության ավտոճանապարհների, կամուրջների հիմնանորոգման, ինչպես նաև մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ ձմեռային և ընթացիկ ամառային պահպանության աշխատանքների իրականացման համար միջնաժամկետ ծախսային ծրագրերի բյուջետային ֆինանսական հայտը:

Հողաշինություն հողօգտագործում

Հաշվետու ժամանակահատվածում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231.013 հա, որից գյուղ-նշանակության հողեր՝ 189545.7 հա, այդ թվում վարելահող՝ 15853.5 հա, բազմամյա տնկարքներ՝ 2143.3 հա որի մեջ պտղատու այգիներ-1126.8հա, խաղողի այգիներ-1016.4հա, խոտհարքներ՝ 5032.1 հա, արոտ՝ 92128.7 հա, այլ հողատեսքեր՝ 74388.1հա: Մարզում ոռոգվող հողերը ընդամենը կազմում են 6978.5 հա կամ 3.68% :

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ թիվ 1066-Ն որոշման Արենի, Գլաձոր և Եղեգնաձոր համայնքներում՝ կատարվել են համայնքային սեփականության և քաղաքացիների սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություն՝ ցածրարժեքից-բարձրարժեքի՝ փոփոխության են ներկայացվել 38.86 հա, որից Արենի համայնքում 37.5հա փոխադրվել և անցել է բազմամյա տնկարքների տակ, Եղեգնաձոր համայնքում 0.8հա արոտը փոխադրվել է վարելահողի՝ հետագայում պտղատու այգի հիմնելու նպատակով, իսկ Գլաձոր համայնքում 0.53հա վարելահողը փոխադրվել և անցել է բազմամյա տնկարքների տակ: Կատարված բոլոր փոփոխություններն արծածվել են մարզի 2021 թվականի հողային հաշվեկշռում: Այս գործընթացը շարունակական է: Կատարվել է նաև հողատեսքերի՝ բարձրարժեքից-ցածրարժեքի փոփոխություններ Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի քաղաքացու սեփականություն հանդիսացող 0.167հա պտղատու այգին և Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող 2.61306հա և 3.58007հա պտղատու այգիները փոխադրվել է ցածրարժեք հողատեսքերի՝ վարելահողերի:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողով է ներկայացվել համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում փոփոխություններ կատարելու 20 առաջարկություն, որից 16-ին հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն և սահմանված կարգով փոխանցվել համայնքների ղեկավարներին: Մնացած 4-ն ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգումներ են կատարվել մարզի Եղեգնաձոր, Վայք և Ջերմուկ համայնքներում: Հայտնաբերված թերությունների վերացման համար առաջարկություն է ներկայացվել և հստակ ժամկետ է սահմանվել՝ արոտների օգտագործման տրամադրման կարգը իրավական ակտերի պահանջներին համապատասխանեցնելու համար:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի համաձայնեցման է ներկայացվել Ջերմուկ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 0.04հա հողերի օտարման առաջարկությունը, որի վերաբերյալ ՀՀ ՏԿԵ նախարարի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Ընթացիկ հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներն ավելի դյուրին դարձնելու նպատակով մասնագիտական և մեթոդական օժանդակություն է ցուցաբերվել համայնքային հողերի իրավական, որակական, քանակական փոփոխությունների վերաբերյալ առաջարկների կազմման խնդրում:

Հետևողականություն է ցուցաբերվել համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման աշխատանքներին ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերից՝

ա) օտարվել է 107.51 հա, որի ընդհանուր գումարը կազմել է 56785.85 հազ. դրամ.

բ) վարձակալակն հիմունքներով օգտագործման է տրամադրվել 34384.5հա, որի վարձավճարը կազմում է 45154.3հազ դրամ:

Ուսումնասիրվել են հողային հարաբերությունների վերաբերող համայնքի ղեկավարների և ավագանու կողմից ընդունված որոշումները և ստուգվել են դրանց օրինականությունները:

Սուբվենցիոն ծրագրեր

2021թ. ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել հաստատման համար 39 **սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ: Սուբվենցիաներ ստանալու համար ծրագրային հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 39 ծրագրից հաստատվել է 38 **ծրագիր՝** 2 **մլրդ**. 126,3 **մլն ՀՀ դրամ** արժողությամբ, որից 978,6 **մլն**. **ՀՀ դրամը կամ** 46,02 %-**ը համայնքների ներդրումն** է, 1 **մլրդ**. 141,4 **մլն ՀՀ դրամը կամ** 53,68 %-**ը՝ սուբվենցիայի գումարն** է, իսկ 6,3 **մլն ՀՀ դրամը կամ** 0,3 %-**ը՝ մասնավորի ներդրումն** է:

Պետություն-համայնք համագործակցությամբ համայնքային ենթառառուցվածների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերով 2021 թվականի իրականացվում են՝

- խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման,
- ոռոգման համակարգերի կառուցման/նորոգման,
- բնակավայրերի փողոցների կառուցման/նորոգման,
- փողոցային լուսավորության համակարգի կառուցման/ նորոգման,
- վերականգնվող էներգետիկայի /այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում/,
- բնակավայրերի գազաֆիկացման,
- մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերման,
- համայնքային կենտրոնների կառուցման/ վերանորոգման,
- բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգման, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառմամբ:

38 **սուբվենցիոն ծրագրերից** իրականացվում են 32-**ը՝** 1,625,458,766 **ՀՀ դրամ արժողությամբ**, որից մասնավոր ներդրող՝ 6,275,902 **ՀՀ դրամ** (0,4%), համայնք՝ 716,166,647.5 **ՀՀ դրամ** (44,1%), սուբվենցիա՝ 903,004,216.5 **ՀՀ դրամ** (55,5%):

6 **ծրագրերի** /327,818,250 **ՀՀ դրամ**, որից համայնք՝ 195,704,200 **ՀՀ դրամ** (59,7%), սուբվենցիա՝ 132,114,050 **ՀՀ դրամ** (40,3%)/ իրականացման համար տարբեր պատճառներով այս տարի մրցույթներ չեն հայտարարվել:

Ներկայումս ֆինանսավորվել է 16 **ծրագիր**՝ 647**մլն**964**հազար ՀՀ դրամ արժողությամբ**, որից համայնքային ներդրումը՝ 280**մլն**918 **հազար ՀՀ դրամ կամ** 43,35%, սուբվենցիոն գումար՝ **367 մլն 045 հազար ՀՀ դրամ կամ** 56,65%, իսկ 16 **ծրագրի** աշխատանքները որոնց **ընդհանուր գումարը կազմում է 925մլն363հազար ՀՀ դրամ**, չավարտելու պատճառով տեղափոխվել են 2022թ.:

9 **ծրագրերի** փաստաթղթերն արդեն ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ պետական բյուջեից սուբվենցիա հատկացնելու նպատակով:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության իրականացման նպատակով ապահովվվել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը, որն էլ նպաստել է զբոսաշրջիկների թվի աճին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մշակվել են ներդրումային ծրագրեր օրինակ՝ Նորավանքի կիրճի, Արենի գյուղի և Մոզրովի քարանձավի ներդրումային ծրագրերը, և ներկայացվել ՀՀ կառավարություն:

Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ մշակվել են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը: Ինչպես նաև պարբերաբար մշակվել են հյուրատների զարգացման ծրագրեր:

Վայոց ձորի մարզի Արենի գյուղում Պետություն-մասնավոր համագործակցության շրջանակում ընթանում է Թուֆենկյան հիմնադրամի կողմից հյուրանոցային համալիրի կառուցման աշխատանքները:

Համալիրի շահագործումը շատ կարևոր նշանակություն կունենա մարզի զբոսաշրջության զարգացման գործում և կխթանի զբոսշրջիկերի հոսքը դեպի մեր մարզ: ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը պետական միջոցներով, որը կազմել է մոտավորապես 700 մլն ՀՀ դրամ, աջակցել է հյուրանոցի կառուցման համար անհրաժեշտ համայնքային ենթակառուցվածքների ստեղծմանը:

Առողջապահության բնագավառ

Մարզային առողջապահական կազմակերպությունների ֆինանսավորման համար 2021 թվականին հատկացվել 845.9 մլն. դրամ գումար: Իրականացվել է 111.642.8 հազ. դրամի վճարովի ծառայություններ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 24172.1 հազ. դրամով:

2021 թ.-ի ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել է 266 ծնունդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 7-ով:

Պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 54 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ են ուղեգրվել 48 անձ, իսկ առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 12 երեխա, իրենց խնամակալների հետ:

Բժշկական կազմակերպություններում աշխատում են 395 բուժաշխատողներ:

2021թ. Եղեգնաձորի ԲԿ-ում վերանորոգվել է ռենտգեն կաբինետը և ՅՈՒՆԻՍԵՖ կազմակերպության աջակցությամբ ձեռք է բերվել ռենտգեն նոր ապարատ:

Հունվարից Եղեգնաձորի ԲԿ-ում գործում է Վահագն Ագլամիշյանի անվան մարզային ակնաբուժական կենտրոնը (Հիմնադիր՝ <Հայկական ակնաբուժության նախագիծ> բարեգործական հիմնադրամ): Իրականացվել է 234 վիրահատություն:

Մարզում ապրիլ ամսվանից իրականացվում է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ պատվաստումների գործընթացը: Գործընթացի արդյունավետությունն ապահովելու համար իրականացվում են հանրային իրազեկման աշխատանքներ, որոնց լիարժեք կազմակերպելու նպատակով ստեղծվել է մարզպետին կից հանձնաժողով:

30.12.2021թ. դրությամբ կատարվել է կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) դեմ 28315 պատվաստում, այդ թվում՝ առաջին դեղաչափ 16111, երկրորդ դեղաչափ՝ 12204, խթանիչ՝ 3: Պատվաստումները պլանավորվում և կատարվում են բժշկական կազմակերպությունների ֆիքսված կետերում, ինչպես նաև արտագնաշարժական բրիգադաներով: Անհրաժեշտության դեպքում ԲԿ-ները աշխատում են 2 կետով:

ՀՀ ԱՆ <Այրվածքաբանության ազգային կենտրոն> ՓԲԸ-ի կողմից <Ջերմուկի առողջության կենտրոն> ՓԲԸ-ին հատկացվել է թվով մեկ <Տոյոտա Լենդ Քրաուզեր> մակնիշի շտապ օգնության մեքենա:

Մի շարք կազմակերպությունների՝ <Լե Լաբողատուաղ Սղվիե> ՍԱՍ ընկերության հայաստանյան ներկայացուցչության <ՆՈՐԴ> բիզնես կենտրոնի, UNICEF միջազգային կազմակերպության, Փարիզի՝ Եվրոպական Ժորժ Պոմպիդու հիվանդանոցի սիրտ-անոթային վիրաբույժ Լևոն Խաչատրյանի նախաձեռնությամբ ու <Ֆրանսիական Լույս> ասոցացիայի աջակցությամբ, Վայոց ձորի մարզպետարանին անհատույց (որպես օգնություն), տրամադրվել են բժշկական նշանակության պարագաներ և դեղորայք, որոնք բաշխվել են մարզի բժշկական կազմակերպություններին ըստ անհրաժեշտության:

Սոցիալական ապահովության բնագավառ

Հետպատերազմյան իրավիճակում սոցիալական ապահովության ոլորտի նպատակը եղել է պատերազմի հետևանքով առաջացած առաջնային խնդիրների լուծումը: Դեկտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել 123 զոհված և անհայտ կորած զինծառայողների գործեր: <Զինծառայողների ապահովագրության հիմնադրամը> հատուցումները տրամադրել է:

Վայոց ձորի մարզից կա անհայտ կորած 10 զինծառայող: <Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի> <Կամուրջ> ծրագրով անհայտ կորած զինծառայողների ընտանիքներն ստացել են նախատեսված ամսական հատուցումները: Անհայտ կորած 5 զինծառայողների վերաբերյալ առկա են դատավճիռներ:

Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի աշխատակիցների կողմից այցելություններ են կազմակերպվել զոհված և անհայտ կորած, հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքներ՝ զորակցության և անհրաժեշտության դեպքում՝ օգնելու նպատակով: Կարիքավոր ընտանիքներին մարզպետարանի կողմից տրամադրվել է ֆինանսական աջակցություն:

Մարզային իշխանությունների հոգածության ներքո են նաև հաշմանդամ դարձած զինծառայողները: ՀՀ ՊՆ է ներկայացվել հաշմանդամություն ունեցող 44 զինծառայողի գործ: Առաջին խմբի 6 և 2-րդ խմբի 15 զինհաշմանդամներ <Զինծառայողների ապահովագրության հիմնադրամի> շահառուներ են և հատուցումներն ստացել են: 3-րդ խմբի 23 զինհաշմանդամների գործեր ներկայացվել են ՀՀ ՊՆ՝ միանվագ դրամական օգնություն ստանալու համար:

Զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների, ՀՀ օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու տեղեկանքները ՀՀ ՊՆ-ից վարչության միջոցով փոխանցվել են շահառուներին:

Շարունակվում է բնակարանի կարիքավոր զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հաշվառումն ըստ ՀՀ Կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված կարգի:

2021 թվականին հաշվառվել են զոհված 3 զինծառայողի և առաջին խմբի 1 զինհաշմանդամի ընտանիքներ: 2021թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ զոհված 2 զինծառայողի և առաջին խմբի 1զինհաշմանդամի ընտանիքներ ստացել են բնակարանի գնման վկայագրեր:

Կազմակերպվել է 2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծած պատերազմի հետևանքով Արցախի Հանրապետությունից տեղահանված և ՀՀ Վայոց ձորի մարզում հանգրվանած ընտանիքներին բնակարանով, հագուստով, պարենային, տնտեսական, հիգիենիկ և անհրաժեշտ պարագաներով ապահովելու գործընթացը և իրազեկման ու խորհրդատվական աշխատանքներ են տարվել ՀՀ կառավարության աջակցության ծրագրերի վերաբերյալ: Արցախի Հանրապետությունից տեղահանված ընտանիքներին պարենային աջակցություն է տրամադրվել Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի և Հայկական Կարմիր Խաչի ընկերության օժանդակությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզում իրականացվել է <<Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝ Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովման>> 11 ծրագիր:

Ծրագրերում ընդգրկվել է Արցախի Հանրապետությունից տեղահանված 41 գործազուրկ քաղաքացիներ, որից 1-ը՝ հաշմանդամություն ունեցող անձ:

Հաշամանդամություն ունեցող անձանց և տարեցների սոցիալական խնդիրները ևս մարզային իշխանությունների ուշադրության կենտրոնում են եղել: Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից տնային պայմաններում ինտեգրացված առողջապահական և սոցիալական ծառայություններ են ստանում տարեց և հաշմանդամություն ունեցող անձինք: Չնայած պատերազմի բերած սոցիալական խնդիրների լուծման առաջնահերթությանը՝ չեն անտեսվել մարզի սոցիալապես անապահով ընտանիքները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալապես անապահով 735 քաղաքացու տրամադրվել է դրամական օգնություն:

Հրատապ և անհետաձգելի կարիքները լուծելու նպատակով <Այլ նպաստներ բյուջեից> հոդվածով երեք միլիոն դրամ ֆինանսական օգնություն է հատկացվել մարզի սոցիալապես անապահով 6 ընտանիքի:

Աշխատանքներ են տարվել միջազգային, հասարակական, բարեգործական կազմակերպությունների հետ, կարիքավոր ընտանիքների համար անհրաժեշտ մարդասիրական օգնություն տրամադրելու ուղղությամբ:

2021 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզին մարդասիրական օգնություն է տրամադրել <Հայկական բարեգործական ընդհանուր միությունը> (ձմեռային նոր հագուստ), որը տրամադրվել է Արցախից տեղահանված, զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև մարզի սոցիալապես անապահով ընտանիքներին:

Մարզում ստեղծվել են միասնական սոցիալական ծառայության տարածքային 3 կենտրոններ, և մեկ պատուհանի սկզբունքով քաղաքացիներն տրամադրվում է սոցիալական ապահովության, զբաղվածության, բժշկասոցիալական փորձաքննության և սոցիալական աջակցության ոլորտներին առնչվող ծառայություններ:

Կրթություն

Մարզում գործում է 48 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում 2 առանձնացված ավագ դպրոց Եղեգնաձոր, Վայք քաղաքներում և մեկ կրթահամալիր Ջերմուկ քաղաքում ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ: ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող դպրոցներում սովորում է 812 աշակերտ, իսկ մարզային ենթակայությամբ գործող 45 դպրոցներում՝ 5997 աշակերտ:

Մարզային 45 դպրոցներում աշխատում են 870 ուսուցիչներ, որոնց շուրջ 90%-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն: Դասարանի միջին խտությունը կազմում է 12 աշակերտ: Մարզի բոլոր դպրոցներն անցել են համընդհանուր ներառական կրթության:

Մարզային դպրոցներում գործում են 17 նախակրթարաններ, որոնցում ընդգրկված է 173 երեխա: Համայնքային ենթակայությամբ գործում են 17 մանկապարտեզներ, որոնցում ընդգրկված է 1269 երեխա:

48 դպրոցներից 19-ը ջեռուցվում է գազի լոկալ կաթսայատան միջոցով, 1-ը (Խաչիկի միջն.) կոշտ վառելիքով աշխատող լոկալ կաթսայատան միջոցով, մնացած 28 դպրոցները էլեկտրական ջեռուցիչներով:

2020-2021 ուսումնական տարում մարզն ունեցել է 9-րդ դասարանի 499, իսկ 12-րդ դասարանի՝ 265 շրջանավարտներ: Միասնական քննություններին մասնակցել է 254 դիմորդներ, որոնցից 181-ն ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնք կազմում են դիմորդների շուրջ 71%-ը:

2021-2022 ուսումնական տարում առաջին դասարան են հաճախել 605 երեխաներ:

Կատարված աշխատանքները

Հավաքագրվել և կազմվել է մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական համակազմի ցանցային տվյալները 2021թ. հունվարի 1-ի և 2021թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ, և մարզպետի կողմից հաստատվելուց հետո ներկայացվել ՀՀ ԿԳՄՍ նախարարություն:

Հաստատման է ներկայացվել հանրակրթական դպրոցների 2020-2021 ուսումնական տարվա 2-րդ և 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակների տարիֆիկացիոն ցուցակները:

Կազմակերպվել, անցկացվել և ամփոփվել է դպրոցականների առարկայական օլիմպիադայի դպրոցական և մարզային փուլերը, որոնց մասնակից 512 աշակերտներից 48-ն իրավունք է ստացել մասնակցելու հանրապետական փուլին.

Կազմակերպվել են 9-րդ և 12-րդ դասարանների շրջանավարտների պետական ավարտական քննությունները և և դպրոցներին է բաշխվել շրջանավարտների պետական ավարտական փաստաթղթերը (ատեստատներ, վկայականներ):

Վարչության մասնագետները դիտորդի կագավիճակով մասնակցել են սահմանված կարգով Սարավանի, Հորսի, Սալլիի հիմնական, Ջերմուկի թիվ 3, Արփիի, Արտաբույնքի, Ազատեկի, Աղնջաձորի, Մալիշկայի թիվ 2, Քարագլխի, Գնդեվազի միջնակարգ դպրոցներում անցկացվող տնօրենների ընտրության գործընթացին:

Դպրոցների կառավարման խորհուրդների ձևավորման նոր կարգի համաձայն կազմակերպվել է միացյալ և առանձին խորհուրդների ձևավորումը և նրա անվանական կազմը հաստատման է ներկայացվել մարզպետին: Ձևավորվել է 13 միացյալ և 7 առանձին խորհուրդներ: Նրանցում ընդգրկվել են 305 անդամներ:

Մարզպետի հանձնարարությամբ 3 աշխատանքային խմբերով կազմակերպվել են այցելություններ մարզի բոլոր դպրոցներ, որի արդյունքում կազմվել են զեկուցագրեր և ներկայացվել մարզպետին:

Մարզի դպրոցականներն ապահովվել են դասագրքերով: Ստացվել է վարձույթով տրվող 7079 կտոր դասագիրք: Վարձավճարները հավաքագրվել է 102%-ով, որը կազմում է 19.798.785 դրամ:

Կազմակերպվել է նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների խորհրդակցություն, որտեղ քննարկվել է մոդուլ մանկապարտեզների (կարճաժամկետ) կազմակերպման, սաների ընդունելության կարգը: Նախատեսվում է Եղեգիս համայնքում կառուցել 144 երեխայի համար մոդուլ մանկապարտեզ:

Հանրակրթական դպրոցների կողմից ընդունվել և ամփոփ հայտի ձևով ԿԳՄՍ նախարարություն է ներկայացվել տարրական դասարանների 2021 թվականին դասագրքերի թվաքանակի վերաբերյալ տեղեկույթ: Ստացվել և բաշխվել է պետբյուջեի ֆինանսավորմամբ տպագրվող 12669 կտոր դասագիրք:

Ավարտվել է փաստաթղթային ատեստավորման աշխատանքները, ատեստավորվել է 121 ուսուցիչ:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մարզում գործում են՝

Երկու թանգարաններ՝ <Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարանը> ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարանը՝ մարզային ենթակայությամբ:

Գերատեսչական ենթակայությամբ գորշում է երկու պատկերասրահ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում: Մեկ երաժշտական դպրոց մարզային ենթակայությամբ, և չորս արվեստի դպրոցներ համայնքային ենթակայությամբ՝ Վայք, Ջերմուկ, Արենի համայնք գ. Աղավնաձոր: Մարզի երաժշտական և արվեստի դպրոցներում սովորողների թիվը 732 է, իսկ դասավանդողների թիվը 92: Մեկ գեղարվեստի դպրոց (65 աշակերտ 5 մանկավարժ) Եղեգնաձոր քաղաքում:

Վայք և Եղեգնաձոր քաղաքներում գործում են ՄՍԿ-ներ (մանկական ստեղծագործական կենտրոն):

Համայնքային ենթակայությամբ գործում է 36 գրադարան, իսկ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ մեկը՝ Եղեգնաձոր քաղաքում:

Մարզային ենթակայությամբ Եղեգնաձոր քաղաքում գորշում է մեկ մշակույթի տուն, իսկ համայնքային ենթակայությամբ՝ 30-ը, որոնցից միայն 14-ում հնարավոր է մշակութային միջոցառումներ կազմակերպել և անցկացնել: Մյուսներն ունեն վերանորոգման կարիք:

Կազմակերպված մշակութային միջոցառումները.

- Գրական-գեղարվեստական միջոցառումներ են ազմակերպվել <<Բանակի օր>>, <<Կանանց միջազգային օր>>, <<Մայրության և գեղեցկության տոն>> խորագրերով:

- <Երիտասարդների միջազգային օր>, <Սեպտեմբերի 21>, < Կոմիտասյան օրեր>, <<Մենք քեզ հետ ենք Հայոց բանակ>> խորագրով համերգներ:

- Արվեստի և գեղարվեստի դպրոցներում երաժշտական և կիրառական արվեստի փառատոն-մրցույթներ, թանգարանային ցուցադրություններ:
- Հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ՝ պատարագ եկեղեցիներում և ծաղկեդնում հուշակոթողներին:
- Մարզի հանրակրթական դպրոցներում՝ շարադրությունների մրցույթ <<Ես սիրում եմ իմ հայրենիքը>> թեմայով:

Մարզական

- ՀՀ պետական մարմինների աշխատակիցների միջև անցկացվող հրաձգության հանրապետական մրցույթ, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի, Մալիշկայի և Գլաձորի համայնքապետարանների հավաքական թիմերի մասնակցությամբ:
- Շախմատի, կարատեի, ֆուտբոլի հուշամրցաշարեր՝ նվիրված զոհված ազատամարտիկների հիշատակին, անվանի մարզիկների հիշատակին :
- Արվեստի դպրոցներում կիրառական արվեստի փառատոն, Ապրիլի 23-ի երեկոյան երթ ջահերով, դեպի Եղեռնի անմեղ զոհերի հիշատակի խաչքար, իսկ 24 ին մասսայական միջոցառում՝ պատարագ եկեղեցում և ծաղկեդնում խաչ քարի մոտ:
- Մասնակցություն է ապահովվել <<ՀՀ Վարչապետի գավաթ>> սիրողական խճուղային հեծանվավազքիև <<ՀՀ Վարչապետի գավաթ սիրողական: Կրոսավազք> մրցաշարին Արենի համայնքի ներկայացուցիչ Նիկիտա Ծատուրյանը 1500 մասնակիցների մեջ գրավել է 9-րդ տեղը և արժանացել 75.000 դրամ պարգևի:
- Արմավիրի, Արարատի և Վայոց ձորի մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների սաների մասնակցությամբ կայացած <Արվեստ> միջմարզային մրցույթ-փառատոնում մեր մարզը ներկայացնող 22 շնորհալիներ արժանացել են 1-ից 3-րդ անվանակարգերի մրցանակների, որոնցից 4-ը մասնակցել է նաև մրցույթ-փառատոնի գալա համերգին:
- Արենիի միջնակարգ դպրոցի պատանիների ֆուտբոլի թիմը մասնակցել է ՀՀ ֆուտբոլի պատանեկան առաջնությանը և դարձել է բրոնզե մեդալակիր:

ՏԻ և ՀԳՄ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՈԼՈՐՏ

2021 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի 3 համայնքներում իրականացվել են իրավական և մասնագիտական հսկողության աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ծառայության 11 պաշտոնների համար սահմանված կարգով հայտարարվել են մրցույթներ, որոնց արդյունքում համայնքային ծառայության 10 պաշտոն համալրվել է:

2021 թվականի ընթացքում մարզի համայնքներում ատեստավորվել են թվով 10 համայնքային ծառայողներ:

Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել են 72 համայնքային ծառայողներ:

ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչությունը իր լիազորությունների շրջանակներում համակարգել է 2021 թվականի հունիսի 20-ին կայացած ԱԺ արտահերթ և դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրությունների նախապատրաստական աշխատանքները:

2021 թվականի դեկտեմբերի 5-ին կայացած ՏԻՄ ընտրությունների արդյունքում մարզի համայնքների թիվը 5-ն է, որոնցից 3-ը ձևավորվել են համամասնական ընտրակարգով, իսկ 2-ը՝ մեծամասնական:

2021 թվականին մարզի բոլոր համայնքներում սահմանված կարգով իրականացվել են աղբահանության աշխատանքներ:

Հաշվետու ժամանակահատվածում ձեռնարկված միջոցների արդյունքում ապահովվել է տեղական ինքնակառավարման մարմինների գործունության հրապարակայության սկզբունքի պահպանումը:

Միջտարածաշրջանային համագործակցություն

ՀՀ Վայոց ձորի մարզը մեծապես արժևորում է միջտարածաշրջանային համագործակցությունը՝ այն համարելով միջպետական համագործակցության կարևոր բաղադրիչ:

Չնայած Covid-19 համավարակով պայմանավորված միջազգային բարդ իրադրությանը, կատարված աշխատանքների շնորհիվ միջտարածաշրջանային մեր գործընկերների հետ իրականացվում է ամուր, արդյունավետ գործընկերություն՝ հիմնված փոխադարձ հարգանքի և ընդհանուր արժեքների վրա, ինչի մասին լավագույնս հավաստում են արձանագրված արդյունքները և հաջողությունները:

2021թ. օգոստոսի 20-21-ը Վայոց ձորի մարզպետի գլխավորությամբ պատվիրակություն է այցելել Ռուսաստանի Դաշնության Նիժեգորոդի մարզ և մասնակցել Նիժնի Նովգորոդի հիմնադրման 800-ամյակին նվիրված տոնակատարություններին: Այցի ընթացքում քննարկվել են երկու գործընկեր մարզերի միջև համագործակցության զարգացման, ընդլայնման և նոր ուղիների մշակման հնարավորությունները, մասնավորապես, վայոցձորյան արտադրանքի՝ Նիժեգորոդի մարզ արտահանելու հնարավորությունների, ինչպես նաև երկու մարզերի միջև գործարար կապերի ընդլայնման հետ կապված հարցեր:

Օգոստոս ամսին Նիժնի Նովգորոդի Ավտոզավոդսկի շրջանի թիվ 18 մանկական արվեստի դպրոցի դիմաց, որը կրում է հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի անունը, տեղադրվել է ականավոր կոմպոզիտորի կիսանդրին:

Պատասխան այցով սույն թվականի հոկտեմբերի 8 -ին ՀՀ Վայոց ձորի մարզ է այցելել ՌԴ Նիժեգորոդ մարզի պատվիրակությունը՝ Նիժնի Նովգորոդի Քաղաքային Դումայի նախագահ Օլեգ Լավրիչևի գլխավորությամբ:

Համագործակցության արդյունքում շուտով միջտարածաքշրջանային համագործակցություն կհաստատվի ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ համայնքի և ՌԴ Նիժեգորոդի մարզի Կստովսկի մունիցիպալ շրջանի միջև:

Մարզի գործընկեր ՌԴ Արխանգելսկի մարզի հետ համագործակցությամբ մշակվել է մարզերի միջև առևտրա-տնտեսական, գիտա-տեխնիկական և հումանիտար համագործակցության 2022-2024թթ. միջոցառումների իրականացման ծրագիրը, որի ստորագրումը, համավարակով պայմանավորված, հետաձգվել է 2022 թվական: Ծրագիրը նոր շունչ կհաղորդի երկկողմ համագործակցությանը և նոր հնարավորություններ կստեղծի փոխգործակցության համար:

Շարունակվում է ակտիվ համագործակցությունը <Դոմ Մոսկվի> Երևանում մոսկովյան մշակութագործարարական կենտրոնի հետ: Համագործակցության արդյունքում Եղեգնաձորի մարզային մշակույթի կենտրոնում տեղի է ունեցել համերգ՝ նվիրված հայ մեծանուն կոմպոզիտոր և դաշնակահար Առնո Բաբաջանյանի 100 ամյակին, իսկ մարզի երեխաները ներգրավվել են կենտրոնի կողմից կազմակերպվող միջոցառումներին: Հոկտեմբերի 26-ին Վայոց ձորի մարզի Մալիշկա համայնքում հանդիսավոր կերպով բացվել է Ռուսական կենտրոնը:

Հաշվետու ժամանակահատվածում Փարիզի՝ Եվրոպական Ժորժ Պոմպիդու հիվանդանոցի սիրտ-անոթային վիրաբույժ Լևոն Խաչատրյանի հետ համագործակցությամբ և Փարիզի համալսարանական հիվանդանոցային համակարգի՝ APHP հովանավորությամբ, անվանի ֆրանսիացի բժիշկներն այցելեցել են Եղեգնաձորի բժշկական կենտրոն, որտեղ մարզի ավելի քան 58 բնակիչ հնարավորություն է ստացել անցնել անվճար հետազոտություն և ստանալ մասնագիտական խորհրդատվություն: Ֆրանսիացի բժիշկները նախաձեռնել և իրականացրել են նաև շտապ վիրահատական միջամտության կարիք ունեցող մեկ բնակչի անվճար վիրահատությունը:

Այցի շրջանակներում Եղեգնաձորի ԲԿ-ն համալրվել է եվրոպական արտադրության էլեկտրոսրտագրության սարքով: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ստեղծել մշտական հիմունքներով գործող խորհրդատվական համակարգ մարզի և ֆրանսիացի բժիշկների միջև, ինչպես նաև պարբերական այցելությունների իրականացում, ինչը լավագույնս կնպաստի մարզում առողջապահան ոլորտի զարգացմանը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կողմից աշխատանքներ են իրականացվել Ֆրանսիայի Հանրապետության Թուլուզ Մետրոպոլի կողմից Վայոց ձորի մարզում մշակութային զարգացման փորձարարական ծրագրի իրականացման ուղղությամբ, որը պետք է նպաստի մարզում համաշխարհային մակարդակով մշակութային զբոսաշրջության զարգացմանը և մարզի տնտեսության առաջընթացին: Արդյուքնում սույն թվականի օգոստոս ամսին L’Amicale des Armeniens de Touluse-ի փոխնախագահ Ստեֆան Կոջոյանը այցելել է Վայոց ձորի մարզ՝ տեղում ծանոթանալու մարզի զբոսաշրջային ներուժին և քննարկելու համագործակցության հետագա քայլերը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել դիտարկել Վայոց ձորի մարզի և Թուլուզի Մետրոպոլի, ինչպես նաև Ֆրանսիայի Օքսիտանիա երկրամասի հայկական միությունների միջև միջև համագործակցության հուշագրերի կնքման հնարավորությունը:

Վայոց ձորի մարզը մշտապես կարևորել է հայկական համայնքների դերը միջտարածաշրջանային համագործակցության ամրապնդման և զարգացման գործում, որի արդյունքում ամուր կապեր են հաստատվել արտասահմանում գտնվող հայ համայնքների հետ:

2021 թ. ընթացքում Վայոց ձորի մարզպետարանը համագործակցել է նաև Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, կազմակերպությունների, ինչպես նաև այլ երկրներից ժամանած պատվիրակությունների հետ:

Ընտանիքի, կանանց, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Այցելություններ են իրականացվել արցախյան պատերազմում զոհված, անհայտ կորած, վիրավորում ստացած, եռամսյա զորահավաքի մասնակից զինվորների, պատերազմից տուժած, բազմազավակ և բազմանդամ, սոցիալապես անապահով, հաշմանդամություն և այլ խնդիրներ ունեցող ընտանիքներ, ուսումնասիրվել են նրանց կարիքները, ցուցաբերվել անհրաժեշտ աջակցություն առաջարկված տարբեր հարցերի լուծմանը:

2021 թվականին գրանցվել է բռնության 8 դեպք, հաշվառվել է 9 անչափահաս իրավախախտ:Բաժնի մասնագետները մասնակցել են անչափահասների հետ տարվող քննչական գործողություններին և համայնքների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների այն նիստերին, որտեղ քննարկվել են ընտանիքների և երեխաների հետ կապված հատուկ դեպքերը, իրականացվել է աշխատանք ընտանեկան տարաձայնությունների լուծման, հաշտության վերականգնման, երեխայից առանձին ապրող ծնողի հետ շփումն ապահովելու ուղղությամբ:

Խորհրդատվություն է իրականացվել երեխա որդեգրելու ցանկություն հայտնած 2 ընտանիքի և կատարվել է փաստաթղթերի փաթեթի և անձի կենսապայմանների ուսումնասիրություն: Կենտրոնացված հաշվառման է վերցվել առանց ծնողական խնամքի մնացած 8 երեխա, կենսաբանական ընտանիք է վերադարձել մեկ երեխա, դադարեցվել է առանց ծնողական խնամքի մնացած 10 երեխայի նկատմամբ խնամակալությունը՝ ընտանիքի հետ վերամիավորվելու կապակցությամբ :

<Մանուկ> տեղեկատվական համակարգ է մուտքագրվել կյանքի դժվար իրավիճակում գտնվող 205 երեխայի վերաբերյալ տվյալներ: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 65 երեխայի տրվել է ներառական կրթության վկայագիր:

Կատարվել է Արցախից պատերազմի հետևանքով տեղահանված և մարզում ապաստանած ընտանիքների հաշվառման և տվյալների մուտքագրման աշխատանքներ ՀՀ միգրացիոն ծառայության համակարգ:

Քայլեր են ձեռնարկվել Հերմոն և Եղեգիս բնակավայրերի հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երկու չափահաս անձի և երկու երեխայի խնամքը մասնագիտացված հատուկ հաստատությունում կազմակերպելու ուղղությամբ: Կազմակերպվել են գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստեր, քննարկվել ընտանեկան բռնության դեպքեր, իրականացվել բռնության ենթարկված կանանց իրավունքների և շահերի պաշտպանություն:

Բաժինը սերտորեն համագործակցել է միջազգային բարեգործական հիմնադրամների հետ, աջակցել մարզում իրականացրած հումանիտար ծրագրերին և նախաձեռնություններին:

Իրավաբանական ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական բաժին է մուտքագրվել 42 քաղաքացու գրավոր դիմում, տրամադրվել է 25 խորհրդատվություն և ուղղորդում, կատարվել է համայնքների ավագանիների թվով 759 որոշումների՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանության ուսումնասիրություն-փորձաքննություն, որից 15 որոշում համապատասխան պարզաբանմամբ վերադարձվել է տվյալ համայնք:

Տարվա ընթացքում բաժինը հանդես է եկել ՀՀ վարչական դատարանում, որպես պատասխանողի ներկայացուցիչ, ինչպես գրավոր ընթացակարգով, այնպես էլ դատական նիստերին մասնակցելով:

Իրականացվել է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, տրամադրվել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և համապատասխան տեղեկատվություն՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ մարզպետարանի ենթակայության կազմակերպությունների ղեկավարների, աշխատակիցների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների: Համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին ամենօրյա աշխատանքային կարգով տրամադրվել է խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ, իրականացվել է փոխհամագործակցություն:

Զորահավաքային նախապատրաստության ոլորտ

Հավաքագրվել է Արցախյան պատերազմում զոհվածների, անհայտ կորածների վերաբերյալ տեղեկատվության և տրամադրել ՀՀ ՊՆ Զ և ԶՀԾ տարածքային ստորաբաժանմանը, սոցիալական ծառայություններին: Կատարվել է ցուցակների թարմացում և ճշգրտումներ:

Կազմակերպվել են պարտադիր ժամկետային զորակոչերի նախապատրաստման և անցկացման աշխատանքները: Կատարվել է Վայոց ձորի մարզին տրված 2021թ. ամառային և ձմեռային զորակոչի առաջադրանքը:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում կազմակերպվել են միջոցառումներ, որոնց ընթացքում Արցախի և ՀՀ նախագահների, ՀՀ ՊՆ-ի կողմից 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողներին տրված մեդալները ՀՀ Վայոց ձորի մարզպետը հանձնվել է նրանց հարազատներին: Վիրավորում ստացածների մեդալները հանձնվել են անձամբ՝ մարզպետի, մարզպետի տեղակալի և համայնքների ղեկավարների կողմից:

Մասնակցություն է ապահովվել եռամսյա վարժական հավաքների նախապատրաստական և անցկացման աշխատանքներին, կազմակերվել են այցելություններ եռամսյա վարժական հավաքների մասնակիցների ընտանիքներ, կատարվել են կարիքների գնահատում:

Զորահավաքային նախապատրաստության շրջանակներում մշակվել են մարզային և համայնքային համապատասխան պլաններ: Ուսումնասիրվել է դպրոցների ռազմագիտության դասարանների կահավորման, դասերի կազմակերպման և ռազմագիտության ուսուցիչների կողմից տարվող աշխատանքները:

Մարզպետարանի քարտուղարություն

Օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ՀՀ Վայոց ձորի մարզպետն ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը:

2021 թվականի աշխատանքային տարվա ընթացքում մարզպետի կողմից ընդունվել է 215 որոշում, գլխավոր քարտուղարի կողմից արձակվել է 461 հրաման:

Հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ Նախագահի ու վարչապետի աշխատակազմից, ինչպես նաև հանրապետական գործադիր իշխանության մյուս մարմիններից ստացվել ու ՀՀ Վայոց ձորի մարզպետին է վերահասցեագրվել 62 դիմում: 2021 թվականին աշխատանքային տարվա ընթացքում քարտուղարությունում ստացվել է 1377 դիմում:

<<Մալբրի>> համակարգում շրջանառվել է 26828 փաստաթուղթ, որից մտից՝ 10176, ելից՝ 8433, ներքին՝ 8219:

Անձնակազմի կառավարման ոլորտ

Անձնակազմի կառավարման բաժնի կողմից 2021 թվականի ընթացքում հայտարարվել է 11 մրցույթ՝ մարզպետարանի կառուցվածքում առաջացած և մարզպետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական, կրթական և մշակութային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար:

Կնքվել է 33 աշխատանքային պայմանագիր:

Տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի ոլորտ

2021 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի, մարզպետարանի, մարզային ենթակայության կառույցների, մարզի համայնքների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունն ապահովվել է Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայէջում և մարզպետարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում լուսաբանական և տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով: Հաշվետու ժամանակահատվածում մարզպետարանի պաշտոնական կայքէջով հրապարակվել է տեղեկատվական և լուսաբանական բնույթի շուրջ 546 նյութ: Լուսաբանվել են մարզպետի աշխատանքային այցերը, մարզպետի կողմից անցկացրած աշխատանքային խորհրդակցությունները և հանդիպումները՝ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, միջազգային կազմակերպությունների և գործընկեր կառույցների ներկայացուցիչների հետ:

Մարզպետարանի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժիններում իրականացվել են ամենօրյա թարմացումներ, հրապարակվել են Վայոց ձորի մարզպետի և մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունած որոշումները:

Կայքէջում տեղադրված են մարզպետարանում ազդարարման պատասխանատու անձի, մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկությունների պարզաբանման իրավասություն ունեցող անձի, մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի բարեվարքության հարցերով կազմակերպչի տվյալները և շուրջօրյա գործող թեժ գծի հեռախոսահամարները:

Կայքէջում տեղադրվում են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում և մարզային ենթակայության կառույցներում թափուր պաշտոնների վերաբերյալ հայտարարություններ:

Կայքի <Հարցումների վիճակագրություն> ենթաբաժնում հրապարակվել են ՁԼՄ-ների, իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից մարզպետարանին ուղղված հարցումների և մարզպետարանի կողմից այդ հարցումներին տրված պատասխանների վերաբերյալ տարեկան վիճակագրությունը: Բոլոր հարցումներին մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից սահմանված կարգով և ժամկետներում տրվել են պատասխաններ:

Ամենօրյա թարմացումներ են իրականացվել նաև մարզպետարանի Ֆեյսբուքյան էջում և պատասխանվել են էջի նամականիում մարզպետարանին ուղղված առցանց հարցումներին:

2021 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանը 2 անգամ հանդես է եկել մամուլի ասուլիսով:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին ուղղված հարցումներ

2021 հուլիսի մեկից մինչև դեկտեմբերի մեկն ընկած ժամանակահատվածում զանգվածային լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից և ֆիզիկական անձանց կողմից ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին է հասցեագրվել 28 հարցում, որոնց պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Մերժվել է 3 հարցում, հետևյալ հիմքերով,

- Անձնական և ընտանեկան կյանքի մասին տվյալները չհրապարակելու հիմքով,
- ՀՀ անվտանգությունը չվնասելու նպատակով տեղեկությունը չհրապարակելու հիմքով,
- Տեղեկությունների տնօրինող չլինելու հիմքով: